ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 21.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/10

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.01.2017թ. թիվ 03/26-3/1233-18 գրությամբ «Սիտի սայնս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02585942) (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 23.01.2018թ. թիվ ԴՎԱ/239 գրության հիման վրա, 26.01.2017թ.ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Սիտի սայնս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 23.01.2018թ. թիվ ԴՎԱ/239 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ՊՆ կարիքների համար բժշկական պարագաների գնման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ էին ներկայացրել թվով 7 մասնակիցներ, այդ թվում՝ «Սիտի սայնս» ՍՊԸ-ն:

«Սիտի սայնս» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ճանաչվեց առաջին տեղ զբաղեցրած մասնակից: 12.01.2018թ. Armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով 1-ին տեղ զբաղեցնող մասնակցին առաջարկվեց ներկայացնել հրավերով նախատեսված որակավորման պահանջների իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, սակայն սահմանված ժամկետում «Սիտի սայնս» ՍՊԸ-ի կողմից պահանջվող փաստաթղթերը չներկայացվեցին:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշեց «Սիտի սայնս» ՍՊԸ-ի հայտը մերժել»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Նորայր Հարությունյանը:

3. **<u>«Սիտի սայնս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Խորհուրդը դիմել է «Սիտի սայնս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.01.2017թ. թիվ 03/26-3/1233-18 գրությամբ

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Խորհրդում տեղի ունեցած նիստին մասնակցում էր Ընկերության տնօրեն Հրանտ Թումանյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/10 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 10.08.2017թ. թիվ 03/26-3/14670-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարությունը 23.01.2018թ. թիվ ԴՎԱ/239 գրությունը և կից փաստաթղթերը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 30.11.017թ. ժամը 11:00 նիստի թիվ 3, 21.12.2017թ. ժամը 11:30 նիստի թիվ 4, 28.12.2017թ. ժամը 11:30 նիստի թիվ 5 և 19.01.2018թ. ժամը 11:30 նիստի թիվ 6 արձանագրությունները, Ընկերության կողմից ներկայացված հայտի պատճենը.

ՀՀ ՊՆ կարիքների համար բժշկական պարագաների ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների հայտ էր ներկայացրել նաև «Սիտի սայնս» ՍՊԸ-ն:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի՝

- N3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված

կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

- N4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրի պահանջներին: Նույն հայտարարությամբ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

28.12.2017թ. ժամը 11:30 նիստի թիվ 5 արձանագրության 1.3 կետով Հանձնաժողովը որոշել է «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի մերժման արդյունքում Ընկերությանը ճանաչել է 3-րդ չափաբաժնի մասով առաջին տեղն զբաղեցրած մասնակից:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովը 12.01.2018թ. Ընկերությանն ուղարկել է ծանուցում՝ տեղեկացնելով, որ վերջինս ճանաչվել է Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով առաջին տեղն զբաղեցրած մասնակից և պարտավոր է նույն ծանուցումն ստանալուց հետո Հրավերով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնել Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովը 19.01.2018թ. ժամը 11:30-ին կայացած նիստին թիվ 6 արձանագրության 1-ին կետի 1.2 ենթակետով արձանագրել է, որ 12.01.2018թ. Armeps Համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկվել էր ներկայացնել հրավերով նախատեսված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, սակայն սահմանված

ժամկետում «Սիտի սայնս» ՍՊԸ-ի կողմից պահանջվող փաստաթղթերը չներկայացվեցին, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ որոշեց ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով մերժել վերջինիս հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդող տեղ զբաղեցնող մասնակցին:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է «Սիտի սայնս» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ուղարկել լիազոր մարմին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում վերջինիս ներառելու նպատակով, քանի որ ի հայտ է եկել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետով սահմանված անգործություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:

Հրավերի 8.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային

փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով 01.02.2018թ. կայացած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչն ընդունեց, որ 12.01.2018թ. ստացել է Armeps համակարգի միջոցով Հանձնաժողովի ոչ ավտոմատ ծանուցումը, և միաժամանակ հայտնեց, որ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի հայտը մերժելու սպառիչ հիմնավորումը Հանձնաժողովի արձանագրության մեջ չգտնելով՝ հանձնաժողովի քարտուղարից էլեկտրոնային եղանակով ծանուցումը ստանալուց հետո փորձել է հեռախոսային կապ հաստատել վերջինիս հետ՝ ապրանքի տեխնիկական բնութագրին վերաբերող որոշ պարզաբանումներ ստանալու նպատակով, սակայն դա իրեն չի հաջողվել: Այնուհետև, ըստ Ընկերության տնօրենի, Ընկերության կողմից հանձնաժողովին են ներկայացվել պահանջվող փաստաթղթերը, որոնք հանձնաժողովի կողմից չեն ստացվել էլեկտրոնային փոստի հասցեում տեղ գտած վիրուսի պատճառով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի

գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝ 6-րդ հոդվածի՝

• 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;

• 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

• 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայման-ներին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման

չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Խորհուրդն արձանագրում է, որ Հանձնաժողովի կողմից համակարգի միջոցով «Սիտի սայնս» ՍՊԸ-ին ուղարկվել է Ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ համապատասխան ծանուցումը, սակայն պահանջվող փաստաթղթերը վերջինիս կողմից չեն ներկայացվել:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը Ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չներկայացնելով՝ հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Խորհուրդը գտնում է նաև, որ Ընկերությունը Ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չներկայացնելով՝ խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով, ինչպես նաև Հրավերի 8.13 կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.01.2017թ. «Սիտի սայնս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02585942) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել:

2. «Սիտի սայնս» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ